

Հավելված №4
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2024 թվականի -----ի -ի № -Ա որոշման

«Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 26-ի №236Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է փոստային կապի ազգային օպերատորի կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) կարգավորվող գործունեության վերաբերյալ ֆինանսատնտեսական հաշվետվությունների և այլ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ընթացակարգը:

2. Փոստային կապի ազգային օպերատորը Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:

3. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry), Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվության ներկայացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

4. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Տեղեկատվությունը ներկայացվում է Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel) ձևաչաճով՝ էլեկտրոնային ստորագրությամբ: Տեղեկատվությունը լրացվում է Յունիկոդ (Unicod) ձևաչափով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel), Մայքրոսոֆտ Վորդ (Microsoft Word) և Փի Դի Էֆ (PDF) ձևաչափերը:

Էլեկտրոնային ստորագրության բացակայության դեպքում Տեղեկատվությունը ներկայացվում է Փի Դի Էֆ (PDF) ձևաչափով՝ ստորագրված և սկանավորված:

5. Առձեռն կամ փոստային եղանակով կամ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված PDF ձևաչափով ներկայացման դեպքում, Տեղեկատվությունը հանձնաժողով է ներկայացվում նաև Մայքրոսոֆթ Էքսել (Microsoft Excel) ձևաչաձով՝ e-report@psrc.am էլեկտրոնային հասցեին:

6. Տեղեկատվությունն առձեռն եղանակով ներկայացնելու դեպքում դրա ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության ստացման օրը:

7. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Հանձնաժողովը տեղեկացնում է փոստային կապի ազգային օպերատորին և փոստային կապի ազգային օպերատորը օրենքով սահմանված կարգով իրազեկվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:

8. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության կամ այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում փոստային կապի ազգային օպերատորը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվությունում կատարում է

փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն՝ համապատասխան նշումով:

9. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում սխալների, վրիպակների ինքնուրույն հայտնաբերման դեպքում փոստային կապի ազգային օպերատորը կարող է ներկայացնել ճշգրտված տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված Տեղեկատվություն:

10. Փոստային կապի ազգային օպերատորը Տեղեկատվության հետ միաժամանակ Հանձնաժողով է ներկայացնում նաև հաշվապահական հաշվառման հաշիվների շրջանառության տեղեկագիրը՝ եռամսյակային արդյունքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N°749-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված ձևով ներկայացվող շահութահարկի հաշվարկը՝ տարեկան արդյունքներով՝ հարկային մարմին ներկայացնելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11. Տեղեկատվությունը փոստային կապի ազգային օպերատորի կողմից կարող է համալրվել նոր տողերով կամ եղած տողերը կարող են տրոհվել բաղկացուցիչ մասերի:»:

1	2	3	4	5	6	7	8	9	10
9)	Արագ դրամական փոխանցումներ և տարադրամի փոխանակում, այդ թվում՝								
ա.	Վճարում								
բ.	Ընդունում								
10)	Կենսաթոշակի և նպաստների հանձնում, այդ թվում՝								
ա.	Կենսաթոշակ								
բ.	Նպաստ								
11)	Կոմերցիա								
12)	Բաժանորդագրություն՝ փոստային բաժանմունքում ձևակերպում, այդ թվում՝								
ա.	Վաճառք								
բ.	Առաքում								
13)	Փոստմարկետ								
14)	Ավտոավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) վճարներ								
15)	«Մեկ պատուհան» ծառայություն								
16)	Հետադարձ ծանուցում, այդ թվում՝								
ա.	Ներհանրապետական								
բ.	Միջազգային								
17)	Պայմանական արժեքներ, այդ թվում՝								
ա.	Վերագրված ունիվերսալ ծառայություններին								
բ.	Վերագրված ոչ ունիվերսալ ծառայություններին								
18)	Այլ ծառայությունների մատուցում								
III	Արտատարածքային փոխանակման գրասենյակ (EТЕО)								
Ընդամենը մաքուրցված ծառայություններ, այդ թվում՝									
ա.	փոստային բաժանմունքների միջոցով								
բ.	հիբրիդ փոստի միջոցով								

1. Սույն ձևը ներկայացվում է եռամսյակային արդյունքներով (տարվա սկզբից աճողական)՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը:

2. Սույն ձևով նախատեսված ցուցանիշները փոստային կապի ազգային օպերատորի կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի:

(ընկերության ղեկավարի ստորագրությունը)

(անուն, ազգանունը)

Կ.Տ. (առկայության դեպքում):

(փոստային կապի ազգային օպերատորի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՔԱՇԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հաշվետու ժամականաշրջան _____

№	Անվանում	_____			Աճողական՝ ընթացիկ տարվա սկզբից		
		քանակ (հատ)՝	միավորի միջին քաշ (գրամ)	ընդամենը՝ քաշ (գրամ)	քանակ (հատ)՝	միավորի միջին քաշ (գրամ)	ընդամենը՝ քաշ (գրամ)
1	2	3	4	5	6	7	8
I	ԸՆԴԱՄԵՆԸ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝						
1.	ներհանրապետական նամակագրություն, այդ թվում՝						
1)	ընդամենը նամակ, այդ թվում՝						
ա.	փոստային բացիկ						
բ.	մինչև 100 գրամ քաշով նամակ						
գ.	101-250 գրամ քաշով նամակ						
դ.	251-500 գրամ քաշով նամակ						
ե.	501-1000 գրամ քաշով նամակ						
զ.	1001-2000 գրամ քաշով նամակ						
2)	ընդամենը փաթեթ, այդ թվում՝						
ա.	մինչև 100 գրամ քաշով փաթեթ						
բ.	101-250 գրամ քաշով փաթեթ						
գ.	251-500 գրամ քաշով փաթեթ						
դ.	501-1000 գրամ քաշով փաթեթ						
ե.	1001-2000 գրամ քաշով փաթեթ						
II	ՈՉ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝						
2.	միջազգային առաքումներ, այդ թվում՝						
1)	բացիկ						

1	2	3	4	5	6	7	8
ա.	հասարակ						
բ.	գրանցվող						
2)	նամակ						
ա.	հասարակ						
բ.	գրանցվող						
գ.	գնահատված						
3)	փաթեթ						
ա.	հասարակ						
բ.	գրանցվող						
գ.	գնահատված						
4)	փոքր փաթեթ						
ա.	հասարակ						
բ.	գրանցվող						
5)	ծանրոց						
ա.	հասարակ						
բ.	գնահատված						
6)	«Մ» սարկ						
ա.	հասարակ						
բ.	գրանցվող						
7)	Արագընթաց (էքսպրես) փոստային ծառայություն (EMS) նամակ						
8)	Արագընթաց (էքսպրես) փոստային ծառայություն (EMS) ծանրոց						
10)	Սեկոգրամ						
3.	Միջազգային մտից առաքանիներ, այդ թվում՝						
1)	նամակ						
2)	ծանրոց						
3)	արագընթաց (էքսպրես) փոստային ծառայություն						
4.	Ներհանրապետական ոչ ունիվերսալ ծառայություններ, այդ թվում՝						
1)	Մինչև 20 կիլոգրամ քաշով ծանրոցների առաքման գծով ծառայություններ, այդ թվում՝						
ա.	մինչև 1000 գրամ քաշով						
բ.	1001-2000 գրամ քաշով						
գ.	2000 գրամը գերազանցող քաշով						
11)	Հատուկ առաքանի						
12)	Փոստմարկետ						

1	2	3	4	5	6	7	8
13)	Հետադարձ ծանուցում, այդ թվում՝						
ա.	ներհանրապետական						
բ.	միջազգային						
14)	Այլ ծառայությունների մատուցում						

1. Սույն ձևը ներկայացվում է եռամսյակային արդյունքներով (տարվա սկզբից աճողական)՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը:
2. Սույն ձևով նախատեսված ցուցանիշները փոստային կապի ազգային օպերատորի կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի:

(ընկերության ղեկավարի ստորագրությունը)

(անուն, ազգանունը)

Կ.Տ. (առկայության դեպքում)»:

(փոստային կապի ազգային օպերատորի անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ) ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ (ԱՄՈՐՏԻՉԱՑԻԱՅԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հաշվետու ժամականաշրջան _____

հազար դրամ

№	Հիմնական միջոցների անվանումը	Սկզբնական արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք	Հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված մաշվածություն (ամորտիզացիա)
1.	Ընդամենը հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, այդ թվում՝				
1)	շենքեր				
2)	համակարգչային տեխնիկա				
3)	տրանսպորտային միջոցներ				
4)	արտադրական տնտեսական գույք, գործիքներ				
5)	համակարգչային ծրագրեր				
6)	լիցենզիաներ, վստահագրեր (ֆրանշիզներ)				
7)	այլ մեքենա սարքավորումներ				
8)	այլ հիմնական միջոցներ				
2.	Ընդամենը մաշվածություն (ամորտիզացիա), այդ թվում՝				
1)	փոստային կապի ունիվերսալ ծառայություններ				
2)	փոստային կապի ոչ ունիվերսալ ծառայություններ				

- Սույն ձևը ներկայացվում է եռամսյակային արդյունքներով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը:
- Սույն ձևով նախատեսված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքները ներկայացվում են առանց վերագնահատման արդյունքների՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:
- Սույն ձևով նախատեսված ցուցանիշները փոստային կապի ազգային օպերատորի կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի, ինչպես նաև կառուցվածքային փոփոխության դեպքում փոփոխվել:

(ընկերության ղեկավարի ստորագրությունը)

(անուն, ազգանուն)

Կ.Տ. (առկայության դեպքում)»: